



Disability  
Rights  
California

*California's protection & advocacy system*

# Տեղեկատվություն շահառուների համար բուժսպասարկման մասնագետների, հաստատությունների և ծրագրերի վերաբերյալ բողոք ներկայացնելու կարգի մասին

---

*Հունիս 2018թ., Հրապ. #5287.10 - Armenian*

Այս հրապարակումը կարող է օգտակար լինել ձեզ համար, եթե ձեզ անհրաժեշտ է տեղեկատվություն կամ ունեք բողոք բուժսպասարկման մասնագետների, ծրագրերի, հաստատությունների կամ ձեր ստացած ծառայությունների վերաբերյալ: Մենք առաջինը կազմել ենք այն պետական մարմինների ցանկը, որոնք պատասխանատու են բողոքների լուծման համար: Ցանկում ներառել ենք նաև շահերի և իրավունքների որոշ պաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև տեղեկատվության աղբյուրներ ձեր իրավունքների մասին, որոնք նույնպես կարող են օգտակար լինել:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ.....3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ.....7

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐ, ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐ  
ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ .....11

ԲՈՒԺՈՂ ԲԺԻՇԿՆԵՐ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԲՈՒԺՍՊՈՒՍԱՐԿՈՂՆԵՐ  
.....14

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....17

## Էջ 3` 23-ից

### ՆԱԽԱԲԱՆ

Կալիֆորնիայում առողջապահական և տուն-ինտերնատներում տրամադրվող խնամքը կարգավորվում է մի շարք տարբեր մարմինների կողմից: Ստորև համառոտ ներկայացնում ենք այն գործակալություններին, որոնք կարգավորում են առողջապահական ծառայությունների մատուցումը: Մարդիկ հաճախ օգտագործում են շփոթեցնող հապավումներ կամ ծածկանուններ այդ կազմակերպությունների համար, այնպես որ մենք նրանց նույնպես ներառել ենք **ընդգծված** տեսքով:

Բուժող բժիշկների կողմից մատուցվող առողջապահական մասնագիտական ծառայությունների մեծ մասը կարգավորում են Կալիֆորնիայի Սպառողների հարցերով զբաղվող վարչությունը (անգլ.՝ California Department of Consumer Affairs, **DCA**) և լիցենզավորման բաժինները կամ «**խորհուրդները**»՝ կախված ծառայության տեսակից: Դրանք են Բժշկական քննություն անցկացնող փորձագետների խորհուրդը, Ատամնաբույժների խորհուրդը, Վարքագծային ծառայությունների խորհուրդը, դիպլոմավորված բուժքույրերի խորհուրդը և այլոք: Դրանցից մի քանիսին ներկայացրել ենք ստորև: Սպառողների հարցերով զբաղվող վարչության կողմից լիցենզավորված բոլոր տեսակի մասնագետները ներկայացված են իրենց կայքէջերում: [սեղմել](#) այստեղ DCA-ի կայքէջը բացելու համար

Չիվանդանոցներին, կլինիկաներին և խնամքի կենտրոններին, այդ թվում՝ ենթասուր հիվանդություններով հիվանդների խնամքի կենտրոններին լիցենզավորում է և նրանց գործունեությունը կարգավորում է Կալիֆորնիայի Չանրային առողջության վարչությունը (անգլ.՝ California Department of Public Health, **CDPH**): Ընդհանուր բողոքների ներկայացման կարգի մասին տեղեկատվություն և հատուկ բողոքների ներկայացման կարգին առնչվող հղումները կարելի է գտնել հետևյալ հղումով՝ [սեղմել](#) այստեղ CDPH-ի կայքէջը բացելու համար

Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչության (անգլ.՝ California Department of Social Services, **CDSS**) Չամայնքային խնամքի լիցենզավորման (անգլ.՝ Community Care Licensing, **CCL**) բաժինը լիցենզավորում և կարգավորում է շուրջօրյա, ցերեկային և մանկական խնամքի կենտրոններից շատերի գործունեությունն ու մատուցվող

## Էջ 4՝ 23-ից

ծառայությունները: Շուրջօրյա խնամքի կենտրոններն են տուն-ինտերնատներն ու հանրակացարանները, համայնքային խնամքի կենտրոնները (**CCF**), տարեցների շուրջօրյա խնամքի կենտրոնները (**RCFE**) և ծերանոցները: [սեղմել](#) այստեղ CCLD-ի կայքէջը բացելու համար

Մասնավոր կամ կոմերցիոն կառավարվող բուժխնամքի ծրագրերը կարգավորում է Կալիֆորնիայի Կառավարվող բուժօգնության վարչությունը (անգլ.՝ California Department of Managed Health Care, **DMHC**): [սեղմել](#) այստեղ DMHC-ի կայքէջը բացելու համար

Medi-Cal, Denti-Cal և Հոգեկան առողջության ծրագրերը, որոնք կարող են լինել ինչպես կառավարվող բուժօգնություն, այնպես էլ մատուցված ծառայության դիմաց վճարվող ծրագիր, կարգավորվում են Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչության (անգլ.՝ California Department of Health Care Services, **DHCS**) կողմից: [սեղմել](#) այստեղ DHCS-ի կայքէջը բացելու համար

Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագրերից շատերը լիցենզավորվել են DMHC-ի կողմից, և այդ պատճառով մասնավոր և կոմերցիոն ծրագրերով առաջարկվող շահառուների պաշտպանությունն առաջարկվում է նաև Medi-Cal-ի շահառուներին:

Denti-Cal-ի, Հոգեկան առողջության, Medi-Cal-ի վարչաշրջանային կառավարվող բուժխնամքի համար DMHC-ը չի լիցենզավորել որևէ ծրագիր, բացի Սան Մատեո վարչաշրջանի բժշկական ապահովագրության ծրագրից, Վարչաշրջանի կողմից կիրառվող առողջապահական համակարգերից (COHS), որոնք Medi-Cal-ի շահառուների համար վճարում են բուժխնամքի դիմաց հետևյալ վարչաշրջաններում. Դել Նորթ, Հոլմբուրդ, Լեյք, Լասսեն, Մարին, Մենդոսինո, Մերսիդ, Մոդոկ, Մոնտերեյ, Նապա, Օրինջ, Սան Լուիս Օբիսպո, Սանտա Բարբարա

Որոշ գործակալություններ, օրինակ Առողջապահական ծառայությունների վարչությունը (անգլ.՝ Department of Health Care Services, **DHCS**) և Կալիֆորնիայի Հանրային առողջության վարչությունը (անգլ.՝ California Department of Public Health, **DPH**) ունեն «**Օմբուդսմենի**» գրասենյակ, որը նախատեսված է պատասխանելու շահառուների հարցերին և լուծում տալու բողոքներին: Բացի այդ,

## Էջ 5` 23-ից

գործում է **երկարաժամկետ խնամքի օմբուդսմենի** ծրագիր, որը նախատեսված է օգնելու մարդկանց խնամքի և այլ առողջապահական կենտրոններում և շուրջօրյա խնամքի կենտրոններում:

Բժշկական ապահովագրության մասնավոր ծրագրերը, որոնք չեն առաջարկում կառավարվող բուժխնամք, ինչպես նաև Առաջարկվող բուժսպասարկողների կազմակերպությունները կամ PPO-ները և որոշ այլ ապահովագրական ծրագրեր, կարգավորվում են Կալիֆորնիայի Ապահովագրության վարչության (անգլ.՝ California Department of Insurance, **CDI**) կողմից: սեղմել այստեղ [CDI-ի կայքէջը](#) բացելու համար

Covered California ծրագիրը, Կառավարվող բուժօգնության վարչությունը և Ապահովագրության վարչությունը հետևում են Մատչելի բուժօգնության մասին օրենքով (անգլ.՝ Affordable Care Act, ACA) սահմանվող շահառուների պաշտպանության պահանջի կիրառմանը: ACA-ով սահմանվող շահառուների պաշտպանության օրինակներ են՝ մինչև 26 տարեկանը ծնողի հովանու ներքո գտնվող երեխաների ապահովագրության վճարումը, պահպանման ծախսերի մաքսիմումի կրճատումը, կանխարգելիչ բուժխնամքի վճարումն առանց համավճարի կամ պահումների:

Medicare-ը հիմնականում կարգավորվում է Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնի (անգլ.՝ Center for Medicare and Medicaid Services, **CMS**) կողմից սեղմել այստեղ [CMS-ի կայքէջը](#) բացելու համար

Medicare-ի Հավելյալ ապահովագրության ծրագիրը կամ MEDIGAP ծածկույթը Կալիֆորնիայում իրականացնում է Ապահովագրության վարչությունը (անգլ.՝ Department of Insurance, **CDI**): սեղմել այստեղ [MEDIGAP ծածկույթի էջը](#) CDI-ի կայքէջում բացելու համար

Գործում են նաև այլ պետական մարմիններ, շահերի պաշտպանության կազմակերպություններ և շահառուների տեղեկատվության այլ աղբյուրներ, որոնք կալիֆորնիացիներին տրամադրում են տեղեկատվություն առողջապահական ծառայությունների, իրավունքների պաշտպանության և բողոքների ու այլ տարբերակների մասին:

Ստորև ներկայացված է այդ կազմակերպությունների և այլ գործակալությունների ու շահերի պաշտպանության որոշ

## Էջ 6` 23-ից

կազմակերպությունների առանձին կոնտակտային տվյալները և տեղեկատվության աղբյուրներ, որոնք ձեզ համար կարող են օգտակար լինել, եթե ունեք մտահոգություններ ձեր բուժխնամքի վերաբերյալ: Մենք ներառել ենք հնարավորինս շատ կայքէջեր, ինչպես նաև բողոքների բաժինների հղումները: Բողոքների ձևերը կարելի է գտնել այդ կայքէջերում, որոնք թարմացվում են տվյալ գործակալությունների կամ կազմակերպությունների կողմից:

Եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն համապատասխան հղումն առցանց գտնելու համար, չունեք տպիչ կամ համակարգիչ և ցանկանում եք ունենալ բողոքի ձևի տպագիր տարբերակը կամ ունեք այլ հարցեր, խնդրում ենք զանգահարել տվյալ գործակալության անվճար հեռախոսահամարով բողոք ներկայացնելու կարգի վերաբերյալ տեղեկատվություն և օգնություն ստանալու համար, եթե դա այն է, ինչ դուք որոշել եք անել:

Ձեր առողջապահական ծառայությունների հետ խնդիր ունենալու դեպքում կարող եք զանգահարել նաև Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությանը 800-776-5746 հեռախոսահամարով: Սովորաբար կան բուժխնամքի ծառայություններին առնչվող խնդիրները ներկայացնելու տարբեր եղանակներ, որոնք ներկայացված են կցված աղյուսակների վերջում ներառված խնդրի ներկայացման օրինակներում: DRC-ի հետ հեռատիպով կապվելու համար զանգահարել 800-719-5798 համարով

## Էջ 7` 23-ից

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Կառավարվող բուժօգնության ծրագրեր

Կառավարվող բուժօգնության վարչություն (անգլ.՝ Department of  
Managed Health Care, DMHC)

DMHC-ի Սպասարկման կենտրոն

888-466-2219

[DMHC-ի կայքէջ](#)

[«Ներկայացնել բողոք» էջը DMHC-ի կայքէջում](#)

**Medi-Cal**-ի Կառավարվող բուժօգնության ծրագրեր

Առողջապահական ծառայությունների վարչություն (անգլ.՝ Department of  
Health Care Services, DHCS)

Medi-Cal-ի օմբուդսմեն

888-452-8609

Էլ. փոստ՝ [MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov](mailto:MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov)

[«MMC-ի օմբուդսմենի գրասենյակ»-ի էջը DHCS-ի կայքէջում](#)

Ընդհանուր տեղեկատվություն.

[MMC-ի գլխավոր էջը DHCS-ի կայքէջում](#)

Վետերանների առողջություն և նպաստներ տնային խնամքի համար

Վետերանների վարչություն (անգլ.՝ Veteran's Administration, VA)

877-327-0022

800-877-8339 (TTY)

[VA-ի կայքէջ](#)

CalVet՝ օժանդակում է ինչպես VA-ի նպաստները, այնպես էլ

Կալիֆորնիայի վետերանների նպաստներն ստանալու հարցում.

Cal Vet-ի տեղական պատասխանատուներ. 844-737-8368

[Cal Vet-ի տեղական պատասխանատուների կայքէջ](#)

Գտե՛ք Հաշմանդամություն ունեցող ամերիկացի վետերանների (անգլ.՝  
Disabled American Veterans, DAV) կազմակերպության ձեր տարածքային

## Էջ 8՝ 23-ից

գրասենյակը.

[«Գտիրք քո տարածքային գրասենյակը» DAV-ի կայքէջում](#)

Ամերիկայի Անդամալույծ վետերանների կազմակերպության թեժ գիծ՝  
866-734-0857, TTY՝ 800-795-4327

Բուժսպասարկման և առողջապահական ինսամքի թեժ գիծ՝ 800-232-  
1782

[«Վետերանների նպաստներ» Էջը Ամերիկայի Անդամալույծ  
վետերանների կազմակերպության կայքէջում](#)

Վետերանների օգնության կազմակերպություն. 1-866-584-7191

Օգնություն Aid & Attendance-ի և այլ նպաստների ստացման հարցում.

[«Դիմել» Էջը Վետերանների օգնության կազմակերպության կայքէջում](#)

**Medi-Cal**-ի իրավունակություն և բողոքների ներկայացում  
վարչաշրջանային մակարդակով

Սոցիալական ապահովության վարչություն (անգլ.՝ Department of Social  
Services CDSS)

916-636-1980

Medi-Cal-ի իրավունակություն

[Medi-Cal-ի իրավունակության կոնտակտային էջը DHCS-ի կայքէջում](#)

Կապ Սոցիալական ապահովության կամ հոլմանիտար  
ծառայությունների վարչաշրջանային բաժնի հետ - տեղական  
հեռախոսահամարների համար տե՛ս հղումը

[«Վարչաշրջանային գրասենյակներ բժշկական ապահովագրական  
ծածկույթի, Medi-Cal-ի և այլ նպաստներին դիմելու համար» Էջը DHCS-ի  
կայքէջում](#)

## Medicare

Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոններ (CMS)

877-267-2323

[Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնների կայքէջ](#)



## Էջ 9՝ 23-ից

Բողոքների ներկայացում ձեր Medicare-ի բժշկական կամ դեղորայքային ապահովագրական ծրագրին.

[«Բողոքների ներկայացում ձեր բժշկական կամ դեղորայքային ապահովագրության ծրագրին» Էջ Medicare-ի կայքէջում](#)

Medicare-ի ռեսուրսներ Կալիֆորնիայում.

[«Գտնել կոնտակտ խոսելու համար» Էջ Medicare-ի կայքէջում](#)

[«Բողոքարկման և բողոքների ներկայացման կարգը» Էջ CMS-ի կայքէջում](#)

**Medicare, Medi-gap,** Երկարաժամկետ բուժում

Կալիֆորնիայի Տարեցների հարցերով զբաղվող վարչություն  
800-510-2020

[«Ու՞ր գանգահարել ծառայությունների համար» Էջ Կալիֆորնիայի Տարեցների հարցերով զբաղվող վարչության կայքէջում](#)

Կալիֆորնիայի Ապահովագրության վարչությանը կից Medicare-ի հավելյալ ապահովագրական ծրագրեր: Շահառուների թեժ գիծ՝ 800-927-4357:

[Կալիֆորնիայի Ապահովագրության վարչության «Medicare-ի Հավելյալ Ապաստների ուղեցույց»-ի կայքէջ](#)

Երկարաժամկետ բուժիսկամքի օմբուդսմենի թեժ գիծ  
800–231–4024

Բժշկական ապահովագրության խորհրդատվություն և շահերի պաշտպանության ծրագրի (անգլ.՝ Health Insurance Counseling and Advocacy Project, HICAP)

800–434–0222

[«HICAP»-ի կայքէջը Կալիֆորնիայի Առողջ ապրելակերպի պաշտպանների կայքում](#)

Հոգեկան առողջության պահպանում

Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչություն (անգլ.՝ California Department of Health Care Services) (DHCS)

## Էջ 10` 23-ից

Հոգեկան առողջության օմբուդսմեն

800–896–4042

800–896–2512-TTY

Էլ. փոստ՝ [MHombudsman@dhcs.ca.gov](mailto:MHombudsman@dhcs.ca.gov)

[«Հոգեկան առողջության պահպանման օմբուդսմենի ծառայություններ»](#)

[Էջը DHCS-ի կայքէջում](#)

Բժշկական ապահովագրություն

Ապահովագրության նահանգային վարչություն

Կալիֆորնիայի ապահովագրություն–Օգնության թեժ գիծ

800–927-4357

[«Օգնություն» Էջը Կալիֆորնիայի Ապահովագրության վարչության կայքէջում](#)

[Կալիֆորնիայի Ապահովագրության վարչության «Շահառուների բողոքների կենտրոն»-ի օգտատերերի մուտքի էջ](#)

**ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐ, ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ՏՈՒՆ-  
ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐ**

Հիվանդանոցներ, բժշկական կլինիկաներ, տնային բուժօգնության գործակալություններ, տնային բուժօգնություն տրամադրողներ, կրտսեր բուժքույրեր, խնամքի կենտրոններ

Կալիֆորնիայի Հանրային առողջության վարչություն (անգլ.՝ California Dept. Of Public Health, DPH)

Լիցենզավորման և հավաստագրման ծրագիր

Բուժհաստատություններ/Շահառուների տեղեկատվական

համակարգեր

916-552-8700

800-236-9747

- Ընդհանուր տեղակատվություն լիցենզավորման կարգի մասին. [«Լիցենզավորման և հավաստագրման ծրագիր» Էջը Կալիֆորնիայի Հանրային առողջության վարչության կայքէջում](#)
- Տեղեկատվություն բողոքների ներկայացման կարգի վերաբերյալ. [«Բողոքի ներկայացում բուժհաստատության/բուժապասարկողի դեմ» Էջը Կալիֆորնիայի Հանրային առողջության վարչության կայքէջում](#)
- Բացի նահանգային լիցենզավորումից, շատ բուժհաստատություններ և բուժապասարկողներ հավատարմագրվում և հավաստագրվում են Բուժապասարկող կազմակերպությունների հավատարմագրման միասնական հանձնաժողովի (անգլ.՝ Joint Commission on Accreditation of Healthcare Organizations, JCAHO) կողմից: [Միասնական հանձնաժողովի «Մեր մասին» կայքէջը](#)
- Հայտնել հիվանդի անվտանգությունը վտանգող դեպքի կամ բուժապասարկող կազմակերպության հետ ունեցող մտահոգության մասին. [«Հայտնել հիվանդի անվտանգությունը վտանգող դեպքի մասին» բողոքի ներկայացման Էջը Միասնական հանձնաժողովի կայքում](#)

Անցնել հետևյալ հղումով՝ բուժապասարկող կազմակերպության հավատարմագրման և հավաստագրման կարգավիճակն ստուգելու

## Էջ 12` 23-ից

համար. [Որակի ստուգման կայքէջ](tel:630-792-5800)  
630-792-5800

Գերեզմանոցներ և հուղարկավորության բյուրոներ

Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝ Dept. of  
Consumer Affairs, DCA)

Գերեզմանոցների և հուղարկավորության բյուրո

800 – 952 – 5210

(916) 574-7870

[«Բողոքներ» էջ Սպառողների հարցերով զբաղվող վարչության  
Գերեզմանոցների և հուղարկավորության բյուրոյի կայքում](#)

Երկարաժամկետ բուժխնամք/Խնամքի տուն-ինտերնատներ

*Տե՛ս վերևում* լիցենզավորման մասին բողոք ներկայացնելու կամ

Միասնական հանձնաժողովին բողոք ներկայացնելու կարգի

վերաբերյալ:

Երկարաժամկետ բուժխնամքի օմբուդսմեն

800 – 231 – 4024

[«Երկարաժամկետ բուժխնամքի օմբուդսմենի ծրագիր» էջ  
Կալիֆորնիայի Տարեցների հարցերով զբաղվող վարչության կայքէջում](#)

Դեղատներ

Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝ Dept. of  
Consumer Affairs, DCA)

Կալիֆորնիայի Դեղատների սահանգային խորհուրդ

Շահառուների հարցումների կամ բողոքի ներկայացման համար. 916-  
574-7900

Բողոքի ներկայացում որևէ դեղատան դեմ. [«Բողոքի ներկայացում» էջ  
Կալիֆորնիայի Դեղատների սահանգային խորհրդի կայքէջում](#)

Եթե դուք որևէ խնդիր եք ունեցել որևէ տարածքային դեղատան հետ,  
որը կազմում է որևէ դեղատնային ցանցի մասը, զանգահարե՛ք ցանցի  
գլխամասին:

## Էջ 13` 23-ից

Medi-Cal-ի դեպքում գրեթե բոլոր դեղերը, որոնք համարվում են բժշկական անհրաժեշտություն, կարելի է գնել ապահովագրական ծրագրի ծածկույթի գումարով կամ Medi-Cal-ի թույլտվությամբ, եթե դրանք չեն մտնում առանց նախնական թույլտվությամբ ձեռք բերվող դեղերի ցանկի մեջ: Եթե ձեզ հայտնել են, որ «Medi-Cal-ը չի վճարում» որևէ նշանակված դեղի համար, դա հիմնականում սխալ է: Խնդրեք ձեր բժշկին և դեղատանը, որպեսզի նրանք ստանան թույլտվությունը:

Համայնքային խնամքի հաստատություններ, մանկական բուժխնամք, տուն-ինտերնատներ

Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության ծառայությունների վարչություն (անգլ.՝ California Dept. of Social Services, **CDSS**)  
[Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության ծառայությունների վարչության կայքէջ](#)

Համայնքային բուժխնամքի լիցենզավորման բաժին (անգլ.՝ Community Care Licensing Division, **CCL**)

844-LET US NO

844-538-8766

[cclid.ca.gov/](http://cclid.ca.gov/)

[«Համայնքային բուժխնամքի լիցենզավորման բաժնի» էջը CDSS-ի կայքէջում](#)

**ԲՈՒԺՈՂ ԲԺԻՇԿՆԵՐ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ  
ԲՈՒԺՍՊՈԱՍԱՐԿՈՂՆԵՐ**

Խորհրդատուներ՝ ամուսնական/ ընտանեկան/մանկական  
խորհրդատուներ/թերապևտներ (**LMFT/**), կլինիկական սոցիալական  
աշխատողներ (**LCSW**) և այլն

Կալիֆորնիայի Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝  
California Dept. of Consumer Affairs, DCA)

Վարքագծին առնչվող գիտությունների խորհուրդ

916–574–7830

916–445–4933

[Կալիֆորնիայի Վարքագծին առնչվող գիտությունների խորհրդի կայքէջ](#)  
[«Շահառուների բողոքներ» էջը BBS-ի կայքէջում](#)

Բժիշկներ, բժշկի օգնականներ (**PA**) և

Այլ բժիշկ-ասիստենտներ և բուժական անձնակազմ

Կալիֆորնիայի Բժշկական խորհուրդ

800– 633–2322

916–263–2424

[Կալիֆորնիայի Բժշկական խորհրդի կայքէջ](#)  
[«Տեղեկատվություն շահառուների համար» էջը Կալիֆորնիայի  
Բժշկական խորհրդի կայքէջում](#)

Ակնաչափություն

Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝ Dept. of  
Consumer Affairs, DCA)

Կալիֆորնիայի Ակնաչափության սահանգային խորհուրդ

[optometry@dca.ca.gov](mailto:optometry@dca.ca.gov)

916–575-7170

866–585–2666

[Կալիֆորնիայի Ակնաչափության սահանգային խորհրդի կայքէջ](#)  
[Բողոքների ներկայացման էջը Կալիֆորնիայի Սպառողների հարցերով  
զբաղվող վարչության BreZE առցանց ծառայությունների կայքէջում](#)

## Էջ 15` 23-ից

Հոգեբաններ (**PhD, PsyD**) և հոգեբանի օգնականներ

Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝ Dept. of Consumer Affairs, DCA)

Կալիֆորնիայի Հոգեբանների խորհուրդ

866 – 503 -3221

[DCA-ի Հոգեբանների խորհրդի կայքէջ](#)

[«Բողոքի ներկայացում» Էջը DCA-ի Հոգեբանների խորհրդի կայքում](#)

Տարածաշրջանային կենտրոններ և տարածաշրջանային կենտրոնների մատակարարներ

Չարգացման խանգարումներով անձանց սոցիալական ապահովության վարչություն (անգլ.՝ Department of Developmental Services, DDS)

Ընդհանուր տեղեկատվություն. 916-654-1690

Թույլ լսողությամբ անձանց համար՝ 916-654-2054

[DDS-ի կայքէջ](#)

Գտե՛ք Ձեր տեղական տարածաշրջանային կենտրոնը հետևյալ հղումով.

[«Տարածաշրջանային կենտրոնների ցանկ»-ը DDS-ի կայքէջում](#)

Դիպլոմավորված բուժքույրեր, կրտսեր բուժքույրեր, բուժքույր-մանկաբարձուհիներ և այլն

Դիպլոմավորված բուժքույրերի խորհուրդ (անգլ.՝ Board of Registered Nurses, BRN)

(916) 322-3350

TTY՝ (800) 326-2297

[Կալիֆորնիայի Դիպլոմավորված բուժքույրերի խորհրդի կայքէջ](#)

[«Բողոքների ներկայացման ընթացակարգ» Էջը Կալիֆորնիայի BRN-ի կայքէջում](#)

Լոգոպեդներ (**SPL**)

Կալիֆորնիայի Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝ California Dept. of Consumer Affairs DCA)

Լոգոպեդիայի, աուդիոլոգիայի, լսողական ապարատների

## Էջ 16` 23-ից

մատակարարների խորհուրդ

916–263–2666

[DCA-ի Լոգոպեդիայի, աուդիոլոգիայի, լսողական ապարատների մատակարարների խորհրդի կայքէջ](#)  
[«Բողոքների ներկայացման» էջը DCA-ի խոսքի և լսողության խանգարման խնդիրներով անձանց խորհրդի կայքէջում](#)

Բուժքույր-դայակներ և հոգեբուժարանների սանիտարներ

Կալիֆորնիայի Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝  
California Dept. of Consumer Affairs DCA)

Բուժքույր-դայակների և հոգեբուժարանների սանիտարների խորհուրդ  
916–263–7827

[DCA-ի Բուժքույր-դայակների և հոգեբուժարանների սանիտարների խորհրդի կայքէջ](#)

Բողոքի ներկայացում որևէ LVN-ի կամ PT-ի դեմ.

[«Ինչպես ներկայացնել բողոք» էջը BVNPT-ի կայքէջում](#)

Ատամնաբույժներ **(DDS)**

Կալիֆորնիայի Սպառողների հարցերով զբաղվող վարչություն (անգլ.՝  
California Dept. of Consumer Affairs DCA)

Ատամնաբուժական փորձագետների խորհուրդ

916–263–2300

[Կալիֆորնիայում DCA-ի Ատամնաբուժական խորհրդի կայքէջ](#)

Շահառուների բողոքներ.

[Կալիֆորնիայի Ատամնաբուժական խորհրդի «Շահառուների բողոքի ձևը» PDF ձևաչափով](#)



**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Շահերի պաշտպանություն, իրավական խորհրդատվություն և/կամ իրավական ուղեգրում

Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպություն (անգլ.՝ Disability Rights California, DRC)

800-776-5746

[Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպության կայքէջ:](#)

Կայքէջի վերին բանների վրա սեղմեք «Հրապարակումներ» հղումը՝ ի թիվս այլ թեմաների Medi-Cal-ի և առողջապահական խնամքին առնչվող իրավունքների մասին տեղեկատվություն ստանալու համար:

DRC-ի Շահառուների իրավունքների պաշտպանության գրասենյակ (անգլ.՝ Clients' Rights Advocacy, OCRA)

Տրամադրում է անվճար իրավական տեղեկատվություն, խորհրդատվություն և ներկայացնում է տարածաշրջանային կենտրոնի շահառուներին. [Շահառուների իրավունքների պաշտպանության գրասենյակի էջը DRC-ի կայքէջում](#)

LawHelp.org

[LawHelpCA-ի կայքէջ](#)

Կալիֆորնիայի Փաստաբանների նահանգային ասոցիացիայի և Կալիֆորնիայի իրավաբանական խորհրդատուների ասոցիացիայի ինտերակտիվ կայքէջ, որը տրամադրում է իրավական խորհրդատվություն կամ օժանդակման տարբերակներ ըստ աշխարհագրական տարածքի և թեմայի:

Կալիֆորնիայի իրավաբանական խորհրդատուների ասոցիացիա [Կալիֆորնիայի իրավաբանական խորհրդատուների ասոցիացիայի կայքէջ,](#)

## Էջ 18` 23-ից

Կայքէջի աջ կողմի «ընտրել տարածաշրջան» հատվածում սեղմել որևէ տարածաշրջանի վրա՝ տվյալ տարածքում իրավական ծառայություններ տրամադրող ծրագրերի ցանկը տեսնելու համար:

Առողջապահական ծառայությունների շահառուների այլանս՝ օգնություն Medi-Cal-ի, Covered California-ի բժշկական ապահովագրության ծրագրերի շահառուներին և ավելին

[Առողջապահական ծառայությունների շահառուների այլանսի կայքէջ](#) –  
Սեղմել «տարածքային օգնության կենտրոններ» հղման վրա՝ ձեր տեղական HCA-ի կոնտակտային տվյալները տեսնելու համար:

Սեղմել «հրապարակումներ» հղման վրա՝ HCA-ի հիանալի գրավոր նյութերը տեսնելու համար

HCA-ի շահառուների թեժ գիծ  
888–804–3536

### **Medicare**-ի փաստաբանական ծառայություն

Կալիֆորնիայի Առողջ ապրելակերպի պաշտպաններ  
Չանգահարել HiCAP-ին՝ անհատական հանդիպում նշանակելու համար.  
800–434-0222

HiCAP-ի գրասենյակներն ըստ վարչաշրջանների՝  
<http://cahealthadvocates.org/hicap/>

Տեղեկատվություն շահառուների համար.

[Կալիֆորնիայի Առողջ ապրելակերպի պաշտպանների «Medicare-ի մասին» կայքէջ](#)

### Խնամքի կենտրոններ

Կալիֆորնիայի պաշտպանները խնամքի կենտրոնների բարեփոխումների համար (անգլ.՝ California Advocates for Nursing Home Reform, CANHR)

916 – 322 – 3350

[CANHR-ի կայքէջ](#)

Կայքէջում գտնելված Է տեղեկատվություն Medicare-ի, Medicaid-ի, վետերանների, տարեցների շահերի պաշտպանության օրենքի և տարեցների շահագործման դեպքերի ու մասնավոր վստահորդների

## Էջ 19` 23-ից

ուղեգրման մասին՝ իջեցված գներով նախնական խորհրդատվություն ստանալու համար

Օրենքի և աղքատության նվազեցման արևմտյան կենտրոն (անգլ.՝ Western Center on Law & Poverty) -

[Օրենքի և աղքատության նվազեցման արևմտյան կենտրոնի կայքէջ «2016թ. բուժօգնության իրավունակության ուղեցույց» Էջը WCLP-ի կայքէջում](#)

Օժանդակ կենտրոն, որն անմիջականորեն չի ներկայացնում շահառուներին կամ չի տրամադրում խորհրդատվություն շահառուներին. կայքէջ, որը տեղեկատվության հիանալի աղբյուր է՝ ներառյալ պաշտպանների համար նախատեսված 2016թ. հրատարակության «Ինչպես կարող են ցածր եկամուտ ունեցող կալիֆորնիացիներն ստանալ և պահպանել բժշկական ապահովագրության ծածկույթը» ձեռնարկը:

Առողջապահական օրենսդրության ազգային ծրագիր՝ NHeLP [NHeLP-ի կայքէջ](#) – խնդիրներ բաժնում սեղմել Կալիֆորնիա հղման վրա, այնուհետև որոնել «Medi-Cal»:

Օժանդակ կենտրոն, որն անմիջականորեն չի ներկայացնում շահառուներին կամ չի տրամադրում խորհրդատվություն շահառուներին. կայքէջ, որը տեղեկատվության հիանալի աղբյուր է

Արդարադատություն տարեցների հարցերում [Տարեցների հարցերի արդարադատության կայքէջ](#)

Օժանդակ կենտրոն, որն անմիջականորեն չի ներկայացնում շահառուներին կամ չի տրամադրում խորհրդատվություն շահառուներին, սակայն խնամքի կենտրոններում առաջացող տարածված խնդիրների լուծման մասին նյութերի հիանալի աղբյուր է. [Արդարադատություն տարեցների հարցերում կազմակերպության «խնամքի կենտրոններում առաջացող 20 տարածված խնդիրները և ինչպես լուծել դրանք» Էջ](#)

Medicare-ի իրավունքների կենտրոն -  
Համընդհանուր թեժ գիծ 800-333-4114

## Էջ 20` 23-ից

[«Կապ մեզ հետ» Էջը Medicare-ի իրավունքների կենտրոնի կայքում  
Medicare-ի իրավունքների կենտրոնի կայքէջ](#)

Ծանոթացե՛ք կայքէջի «Medicare ինտերակտիվ» առցանց տեղեկատվական համակարգին:

Կայքէջը հանդիսանում է տեղեկատվության աղբյուր, որն ունի նաև բազմալեզու թե՛ գիծ շահառուների համար:

Ընտանեկան խնամակալները հոգում են մտային տկարությամբ տարեցների համար խնամակալների ռեսուրսային կենտրոն.

800 – 445 – 8106

[«Կալիֆորնիայի խնամակալների ռեսուրսային կենտրոն»-ի Էջը  
Ընտանեկան խնամակալների այլանսի կայքէջում](#)

[«Կապ» Էջը Ընտանեկան խնամակալների այլանս - խնամակալության  
համագգային կենտրոնի կայքէջում](#)

Ալցհայմերի հիվանդություն և հարակից խանգարումներ

Ալցհայմերի հիվանդության դեմ պայքարի ասոցիացիայի գրասենյակներ

[Ալցհայմերի հիվանդության դեմ պայքարի ասոցիացիայի կայքէջ](#)

800-272-3900 – համընդհանուր հեռախոսահամար

[«Ալցհայմերի հիվանդության դեմ պայքարի ծրագրի» Էջը Կալիֆորնիայի  
Յանրային առողջության վարչության կայքէջում](#)

800-660–1993–տեղական գրասենյակ գտնելու համար

Կալիֆորնիայի գրասենյակների հղումները.

[«Իմ համայնքում» Էջը Ալցհայմերի հիվանդության դեմ պայքարի  
ասոցիացիայի կայքէջում](#)

[«Ալցհայմերի հիվանդության դեմ պայքարի ասոցիացիայի  
գրասենյակներ»-ի կայքէջ](#)

Քաղաքացիական իրավունքներ

ԱՄՆ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն  
(անգլ.՝ U.S. Department of Health and Human Services, HHS)

Քաղաքացիական իրավունքների պաշտպանության գրասենյակ

800 – 368 – 1019

## Էջ 21` 23-ից

[HHS-ի Զաղաքացիական իրավունքների պաշտպանության գրասենյակի կայքէջ](#)

[«Զաղաքացիական իրավունքների խախտման վերաբերյալ բողոքի ներկայացման» Էջը HHS-ի Զաղաքացիական իրավունքների պաշտպանության գրասենյակի կայքէջում](#)

Բացի այդ, յուրաքանչյուր վարչաշրջան ունի քաղաքացիական իրավունքների պաշտպանության գրասենյակ. վարչաշրջանի գրասենյակ զանգահարելիս՝ ինդրեք միացնել այդ բաժնի հետ:

Եթե դժգոհ եք վարչաշրջանին ներկայացրած քաղաքացիական իրավունքների բողոքի լուծման արդյունքներից, և բողոքը վերաբերում է Առողջապահական ծառայությունների վարչության կամ Սոցիալական ապահովության վարչության կողմից վերահսկվող որևէ սահանգային և/կամ դաշնային ծրագրի, դուք կարող եք DSS-ում կամ DHCS-ում բողոքարկել վարչաշրջանին ներկայացրած բողոքը:

Առողջապահական ծառայությունների վարչություն  
Զաղաքացիական իրավունքների գրասենյակ – 916-440-7370  
[Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչության «DHCS-ի լեզվական խտրականության դեմ բողոքի ներկայացման կարգը» PDF տարբերակով](#)

Սոցիալական ապահովության վարչություն  
Զաղաքացիական իրավունքների գրասենյակ – 916-654-2098  
[HHS-ի Սոցիալական ապահովության վարչության «Ձեր իրավունքները. Կալիֆորնիայի Սոցիալական բարեկեցության ծրագրեր» բողոքը PDF տարբերակով](#)

Կամ դուք կարող եք ի սկզբանե ներկայացնել բողոք ցանկացած սահանգային վարչությանը:

Հրդեհային անվտանգության ապահովման մասին օրենքներ

Սահանգային հրշեջ ծառայություն  
916–445–8200

[Սահանգային հրշեջ ծառայության կայքէջ](#)

## Էջ 22` 23-ից

**Medi-Cal**-ի հետ կապված գեղծարարություններ

Առողջապահական ծառայությունների վարչություն (անգլ.՝ Department of Health Care Services, DHCS)

800–822-6222

[DHCS-ի կայքէջի «Վերջ Medi-Cal-ի գեղծարարություններին» էջը](#)

Կալիֆորնիա նահանգի գլխավոր դատախազ (անգլ.՝ California Attorney General, CAG)

800–722–0432

[«Medi-Cal-ի գեղծարարություններ» էջը Կալիֆորնիայի Արդարադատության վարչության գլխավոր դատախազի գրասենյակի կայքէջում](#)

**Medicare**-ի/**Medicaid**-ի գեղծարարություններ

ԱՄՆ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն (անգլ.՝ US Dept. of Health and Human Services, HHS)

Գլխավոր տեսուչի գրասենյակ

800–700–5952

[HHS-ի Գլխավոր տեսուչի գրասենյակի կայքէջ](#)

ՄԻԱՎ

ՁԻԱՐ-ի թեժ գիծ

800 – 367 – 2437

[«ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ին առնչվող հարցերի նահանգային թեժ գծեր» էջը Առողջապահական ռեսուրսների և ծառայությունների վարչության կայքէջում](#)

Սոցիալական ապահովություն

Սոցիալական ապահովության բաժին (անգլ.՝ Social Security Administration, SSA)

800–772–1213

[«Կապ Սոցիալական ապահովության բաժնի հետ» էջը SSA-ի կայքէջում](#)

## Էջ 23` 23-ից

---

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

*Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս [DRC-ի կայքէջի «Ֆինանսավորման դրամաշնորհների և պայմանագրերի ցանկը» էջը](#):*